


ՆԱՄԱԿ

Լիբիական հույզեր

891.99

U-17

ԳԼԳՈՒ — ԱԶԵՐԵՆԵՐ — 1974



19 NOV 2011

891.99

U U U 4 6 L

U-27

W

$$\begin{array}{r} 32842 \\ 100\cancel{x} \\ \hline 3749 \end{array}$$

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՀՈՒՅԶԵՐ

Рос. Публ. Библиотека
ДЛЯ ЧТЕНИЯ
Лит. А. Мещеряков

ՀԱՅՈՒՆ - ԱԶԵՐՆԵՐՈՐ - 34

52693

26.03.2013

Տեխ. խմբագիր՝ Ա. ԱՐԵԱՆ

Հանձնված է տպագրության 17/5 34 թ.
Ստորագրված է տպագրության 15/7 34 թ.
Տպագրական նիշերի թիվը 160.000
Տպագրական թերթերի թիվը 4

Թող կարկաչի, պոետ, յերգերիդ առուն,
Բերքի սնու յերկրիդ քող նա ծանրանա
Ու խնդուք-յունդ անտի, վարարուն,
Թող ամեն տողում յեղնի, բարձրանա:

ԲՍՆԱՏԵՂԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յերկիր իմ,
 յերկաթե վազքիդ դեմ,
 վոսկենձամ հասկիդ դեմ,
 վոռնա թող լուսնահար մի շուն,
 թող մեռնող կարապետներն արդեն
 յերազեն աշուն:

Անցավ մաշինն արտերով,
 սարերը թնդաց,
 վոսկի—վոսկի վարդերով
 մեր սիրտը խնդաց:

Գիտեմ, վոր յերթդ անհողտողդ է
 ու մոտ է բերդը հաղթութան,
 դիտեմ, վոր աճումը հորդ է,
 խորթ ու բորթ է թեկուղ մեր ճամբան:

Այն ո՞վ է՝ ճեղքում է թումբերը,
 լարում է ումբերն արթուն,
 վոր նորից պարթի Հոկտեմբերը
 աշխարհի սրտում:

Հե՛յ,
 վախկոտ,

Հե՞շտ եյիր կարծում կառուցումը,
չոկուտդ ու չիր եյիր կարծում.
Հոկտեմբերը դարերն են կերտել
պայքարով են կերտել Հոկտեմբերը
ու հաղար հերոսներ են ընկել,
մինչ՝ ծաղկել, ծիծաղել են հանդերը:

Մենք պատում ենք յերկիրը յերկաթով,
յերկաթե սրտեր են պետք հիմա,
մաշինն է արշավում թափով
քաղաքի, գյուղի ու հանդի վրա:

Այն ո՞վ է, այն ո՞վ է
հեծեծում ճամբին —
տրորված յերկաթե վազքից,
այն ո՞վ է՝ մեռնում է արգեն
որերի հաղթական դարձից:

Յերկիր իմ,
յերկաթե վազքիդ գեմ,
փոսկեծամ հատկիդ դեմ,
փոռնա թոդ լուսնահար մի շուն,
թոդ մեռնող կարապետներն արդեն
յերադեն աշուն:

Անցա՛յ մաշինն արտերով —
սարերը թնդաց.
փոսկի-փոսկի վարդերով
մեր սիրտը խնդաց:

Ի Ն Զ Փ Ո Ւ Յ Թ Թ Ե ԳՆՍԵԼՆԵՐՆ ԵՆ ՎՈՌՆՈՒՄ

Բացվել է մի արլան դարուն,
թովում է բուրմունքը վարդի,
ինչ փուլթ, թե փոռնում են հեղում
զառամած դալները կրկին:

Գարուն է, ասում եմ, ահա
ու սիրտս թե առած թռչում.
չե՞ փոր բյուր միլիոններ հիմա
իմ յերկրի գարունն են տենչում:

Մեկ գարուն՝ հաղար վանչ հզոր,
հաղար նոր հորձանք ու հուլում,
գարունը սրտումս է ախոր,
ինչ փուլթ, թե դալներն են փոռնում:

Ո, սիրտ իմ, ո, խիտդ իմ ջահել,
հուլներն ալեկոծ տփկան,
են յերբ եր՝ դգացիր կյանքում
առաջին թովչանքը գարնան,

Են յե՞րբ եր, են յե՞րբ եր անցար
արահեան՝ արյունոտ գիչեր

և արդեն դարուն է մի մաս,
անցածը՝ յերազոտ հուշեր:

Ո՛ր, վրանքը շքերթ է լուսե —
այս հրի, յերկաթի դարում,
հորդացեք խնդության հույզեր,
ինչ փուլթ, թե դարյերն են փոփոխում:

Թանջում է ամեն քար աշտոյ,
կանչում է ամեն սիրտ խինդոյ.
վողջուն քեզ, արշալույս իմ նոր,
ո, սիրտ իմ, քեզ հաղար բարոյ:

Բացվել է մի ալման դարուն,
թոփում է բռնունքը վարդի,
ինչ փուլթ, թե փոփոխում են հեռում
զառամած դարյերը կրկին:

1928 թ.

ԲՆՈՒՇԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԾՈՎ

Այս դաշտերով մի որ թնդանոթն էր անցնում,
գնդացիներն էր յերգում այս ջրերի ափին,
յերբ դաշնակն էր իշխում և մուսավաթ Նաբին,
այս դաշտերով մի որ թնդանոթն էր անցնում:

Տափաստան էր այստեղ ու անձրևող արցունք,
արնաշաղաղ թիկեր կմախքի պես ցցված
ու արշավում էր յերբ սոյլը համատարած,
այս դաշտերով մի որ թնդանոթն էր անցնում:

Բայց բարձրացավ մի որ դասակարգն արի
ու ցասումը հորդեց հեղեղումի նման.
խնդությունը հոսեց յերակներում յերկրի,
փողփողացին յերբ սփռ դրոշակները մեր ալ:

Յեղ յերկիրը հազավ յերկաթափոր շապիկ,
տափաստանում նախկին ծխնելույղներ յեղան,
հրավառվեց դաշտը մաշինների տապից
և արտերը դարձան մի հորդահոս սելավ:

Բոլշեիկյան կամքը մի նոր ուղի հարթեց,
մեր թշնամին ջարդվեց հնգամյակի մարտում
և յերգեցին թափով տրակտորներն այնտեղ,
ուր գործում էր յերեկ թնդանոթն արթուն:

Պողպատի պէս աշտոր ամբակուռ ե ու հաղթ
դասակարգը բանա՞յր այս լենինյան դարում,
յեղբայրական կապը մեր բաղձացեղ յերկրում
պողպատի արև աշտոր ամբակուռ ե ու հաղթ:

Մենք քայլում ենք զգաստ, բոլշևիկյան մարշով,
դժախտին ե թեպետ հաղթանակի ուղին
ու ամպերը կռվի կուտակվում են թեպետ
մենք քայլում ենք զգաստ բոլշևիկյան մարշով:

Ո՛ր, վողջուշն քեզ, յերկիր, հերոսական յերթիդ,
հերոսներին քո բոլոր արևախառ վողջուշն,
թե թշնամին փորձե պարզեյ թաթը բերդիդ
մեր բանակը նորից վրարձրանա հուժկու:

Կբարձրանանք նորից հոկտեմբերյան թափով,
հերոսական կռիով կղբալենք դիրքեր,
թշնամու դեմ խարդախ, ուսմբերի դեմ ահեղ,
կբարձրանանք նորից հոկտեմբերյան թափով:

1932 թ.

I

Յերբ ձեղքում ե մի սուր յերկնի կապույտը
և բացվում արևը վերքի պէս կարմիր,
յես հիշում եմ դարով այն հին աշնուտը
և այն հերոս մարդուն, վոր ընկավ դաշտում:

Նա պարզել եր ձեռին մի դրոշ արնոտ,
դրոշի նման կարմիր վերքը իր կրծքին,
իսկ շուրջը լայն եր աշունը վերքոտ
և յերգում եր մահերդ սևաթույր քամին:

— Ո՛ր, արնախում պար, մրմնջում եր նա,
դիտեմ, վոր չեն լուի, կդան, կվառեն...
ու արնաներկ դրոշն այս գեռ կբարձրանա
այս դաշտերի վրա, վորպես վառ արև:

Նա փակեց աչքերը, ճրագի պէս մարեց
յեվ թափալեց գետնին դրոշն արնագիր,
յերբ աշունն եր լայն հանդում հողմածեժկ
ու յեյնում արևը վերքի պէս կարմիր:

II

Ու բարձրացավ դրոշն այն վառ
դաշտում արնոտ, ուր նա ընկավ,

Հոկտեմբերեցան հրով պայծառ
հոբնդացին հող ու մկան:

Յեկամ արեն ու համբուրեց
գարնանային ջրերը հորդ,
յեկամ արեն ու կյանք բուրեց
խրճիթներին հեռու ու մոտ:

Նա չլսեց հաղթանակի
հիմնը, սահայն, հերոսական,
չզգաց խինդը այս փերեքի,
խինդը յերկրի սափետական:

Նա տեսել էր միայն մշուշ
անապատում աչդ. ամայի,
լսել էր նա հառաջ ու փուշ
ու արշավը դաժան մահի:

Քամին էր լուկ, փոք անյերկյուղ
հոնդում էր անապատում,
մտնում ամեն տնակ ու հյուղ,
քամին՝ դաժան ու անխնդում:

Ու քամու հետ քրքջում էր
գնդացիքը այն ահարկու
և անձրևում անթիվ մահեր
առավոտից մինչ իրիկուն:

Նա չտեսավ՝ ինչպես մի որ,
դուփեց այնտեղ հրե մի վաղը
և անապատն են այլուր
դարձավ ջահել մի նորահարս:

Նա չտեսավ խինդը վարդի,
նա չքաղեց բույրը նրա
ու չտեսավ նա յերկրի
արշավանքը հանդի վրա:

Յեկան ձեռներ յերկաթմկան,
դործի դրին բետոն ու լար,
ծծեց քրտինք այնքան, այնքան,
սլափին շարփող ափեն մի քար:

Դասակարգն այնտեղ պարզեց
իր դրոշն արնով ներկած,
դասակարգն այնտեղ կանգնեց
մի հուշարձան հերոսական:

Ծուխը յեկամ կապեց վրան,
կանչեց սուլիչն իսկալուսին
յեվ ամեն մի սլափի վրա
Ժպտացին լուռ ճանթիվ յուսին:

III

Յեվ յերբ քուրան արշալուսի
արևում է ու հոբնդում,

յես հիշում եմ այն հերոսին,
այն, վոր ընկաւ անապատում:

Այն ցատումն է նրա աչտոր
աշնպես թափով հրախոտում,
նրա թափած արշուկն է, վոր
դառնում է խինդ ու վարարում:

Ու հորդում են հուլիներն աշնտեղ,
դարնան ահեղ սելի նման,
սոցիալիզմ են կերտում աշնտեղ
միլիոն ձեռքեր բանփորական:

1930 թ.

ՄԵՆ Ե ՏՈՒ Ե ՄԵՐ ՏՈՒՈՒՄ


Յերբ հրդեհվում են սրտերը մեր վեհ,
աշս նոր յերկունքի հրերով խոսուն,
յերբ խինդ է կյանքը թուրջ է ու յերդ
ու գարնան հորդուն ջրերն են հոսում:

Թող վոր մոնչան հնոցները դռն
մեր բյուր հանքերում, գործարաններում,
յերկաթե վանչը թող հուղե աչտոր
մեր սրտերը վառ — մենք տոն ենք տոնում:

Մենք տոն ենք տոնում յերկաթի, լույսի,
յերկաթի, լույսի կարոտով վառված,
կոտմ ենք բախտը մեր գայիք որի —
26 սրտերի կակիծով հարբած:

Թող մուրճերը հաղթ խելագար պարեն
ծիծաղկոտ կյանքի աշս վառ խնջույքում
ու քրքջան թող, հոգմի փոխարեն,
գինամից փրփող ժայռերը հսկա:

Շատրվանները թող ժայթքեն հիմա,
թող լինի աչտոր Զադեսում հանդես,
հանդես մի անդուր մ աստղերի պես,
կամքիս լույսերը թող թարթեն աչտոր:



Յեւ կդան նրանք, շարքերով հզոր,
մեռած ու կորած հերոսները մեր,
վոր կյանքով յեցուն փառվեն ամենքին —
այդ մեծ հանդեսին, այդ մեծ հանդեսին:

1928 թ

Հ Ո Ր Ջ Ա Ն Ք Ն Ե Ր ՈՒ Մ

(Հատված)

Ծովը իր գորշ յափնջին է հապնում,
այիքներն է ափին զարկում կատաղի
ու գծում է նորից մի վրձին թաղուն
սիլուետը լուսնի ջրերում աղի:

Վիշկաներն արթուն պահակների պես,
չըջում են ահա մշուշի միջին,
գրոհում են նրանք ծովի պես կասես,
ծովի պես թռքում է բուխտան իլիչի:

Հորնդում է քամին, սուլում է քամին,
յինում է ծովը ափերից վարար,
ծովի պես հուզվում է բրիգադիր Ալին
ու քրտինքը հոսում ճակտից արևառ:

— Ճիշտ եսպես եր, Վարդան, ծովը մոռնում,
յերբ կոմունարները ճանապարհ բնկան:
«26» էին նրանք... ու լսով եմ հիշում,
մութ եր գիշերն էլ սրտի պես մարդկանց...

Ու պատմում է Ալին «26»-ի մասին
տխուր մի պոեմ, մի պոեմ անմահ,

լսում են աղերքն ու նրանց ուսից
հոգնությունն եւ ընկնում ասուպի նման .

Լսում են ահա : Ու թփում ե նրանց ,
թե կանչում ե դեռ մեկն ալդ ժամին .
— Մենք հեռանում ենք , բայց դեռ կդառնանք ,
դեռ կփչի դաժան հյուսիսի քամին :

Դուրսը ալիքներն են գրոհում ելի
ու լողում ե ծովում լուսինը արթուն ,
գլորում ե քամին յեռները ջրի ,
հուշերի մի գիրք ե կասես նա թերթում :

Ահա Վարդանը : Աչքերում նրա
նստել ե մի վառ , մի ալրող թախիժ
ու մտքով կասես սլանում ե նա ,
դեպ Ախա — Կույժա նորից ու նորից . . .

Ու կասես ահա յեղում են նրանք —
Կոմունարները , ախպրերից մառ ,
աչքերում նրանց՝ մի հուզող կրակ ,
հայացքներում վառ մի խորհուրդ անմար .

Ու ինքը կասես լսում ե ահա
խորհուրդը ալդ մեծ , խորհուրդը պայծառ
— Անդին ընկերներ , գրոհենք անահ ,
վոր հին աշխարհից չմնա մի քար :

Ու փոթորկում ե սիրտը Վարդանի ,
ոտորն ե դառնում թափով խենթահար ,
խիկ գրոհում ծովն ե մոռնում մոլի
ու յեղում անմերձ առիերից վարար :

Յեւ հայացքները ոտորին հառած ,
մի հրախալով ասաղնապով հողու ,
դառնում ե հուժկու շուրջաբեր մարդկանց ,
յերբ քամին գրոհում բուրդեր ե պոկում :

Ի՞նչ փուլթ , թե քունն ե կախում աչքերից
ու համառում ե հողը դեռ յերկար ,
նայթ ե հարկալոր հիմա յերկրին ,
հրե կամք ե պետք վերելքի համար :

Թող մոռնա բուքը ջրերի վրա
ու թող յեռնառ ծովը թե առած ,
վճիռ կա , սակայն , արտերում նրանց ,
վոր հորը գործի ժամկետից ասաջ :

Մաքառում են նրանք գիշեր ու ցերեկ ,
արևը նրանց ճակատն ե կիզում ,
ամեն ուղեղում՝ հարթանակ , սլերելք ,
նրանց պայքարի կրակն ե հուզում :

Ու ժառից իջնող ջրվեժի նման ,
փոկերն են ասում թափով մի անտես ,
տնքում ե հողը , դալարվում ե նա ,
հոնդում մորաբն ծովը՝ փրփրադեղ :

Հե՛ջ, նաւթ, նաւթ, որերիս յերգն ես դու, նաւթ,
իմ ծաղկող յերկրի հեքն ես դու, նաւթ,
Ո՞վ, ո՞վ չի գգում ուժը քո վիթխարի,
թշնամու մահախոց վերքն ես դու, նաւթ:

Ահա յեյնում ե յերկաթե մի յերթ
քաղաքների ու գյուղերի վրա,
ծաղկում ե աշտոր անապատը յերկ,
բյուր գործարանն ե հոնգում հլմա:

Արշաւում են յերկաթե նժույգներ
ու գոլիում կապուղիքունը հանդերի,
վոր աճեն առատ ձյունեղէն արտեր -
բամբակի խնդրից յերկիրս բերկրի:

Նաւթ, նաւթ, հուր ու յեղու կտանք քեզնով
մենք քարին, հողին ու գորշ լեռներին,
բյուր մատուռների կյանք կտանք քեզնով,
թափ կտանք քեզնով մեր հաղթ արշաւին:

Գիտեմ, վոր քեզնով չենք վառի կրկին
անկուշտ հարստի ջահերը մոսկի
չենք սարքի նրա սեղանները լի,
ինքներս մնանք ահառն, անութի:

Գիշերներն անքուն մենք հոր ենք փորել,
սև տառապանքի վերքը սրտներիս,
իսկ մեր վաստակը հարուստն ե լափել —
գիղել վոսկիներ, արմաղ ու փերուղ:

Մենք հոր ենք փորել մեր կյանքի գնով,
մեր արյամբ սնել գարունը կյանքի,
իսկ մեր հյուղերում աշունը անթոյ
մահեր ե նյութել ձեռքով կարիքի:

Հորդիր, շատրվան, գիտեմ, վոր քեզնով
կառնենք խնդուլթյան մենք նոր քարձրուներ,
մոխիր կդարձնենք հին կյանքը քեզնով,
վոր ել չտեսնենք նորից արցունքներ:

Ահա թե ինչու մեր կամքն աշտոր
ամուր ե այնքան յերկաթի նման,
ահա ինչու չե մեր թափը հոյր,
մեր յերթը հաստատ ու հերոսական:

Հե՛ջ, նաւթ, մեր սրտի դարունն ես դու, նաւթ,
մեր նոր աշխարհի արյունն ես դու, նաւթ,
այն ո՞վ ե փորձում հորձանքդ սանձել,
կամ պարզել քո դեմ արյունոտ մի թաթ...

Հե՛ջ հորդիր, հորդիր, դարկ դու, շատրվան,
քո ամեն դարկը նոր ուժ ու բերկրում.
գիտեմ, քեզ հետ բյուր սրտեր են դարկում

հեռու Բոմբեյում՝ չինեբի յերկրում .
ուր Հոկտեմբերի, ուրախանը վեհ
աշխարհի խափար դռներն ե թակում :

1931 թ.

Լ ՈՒ Ս.

Գարնան վարդի պես բացվել ես, Լալա,
կոմսոմոլ ես դու՝ նետել ես չաղբան .
դու նոր ես հիմա իմ յերկրի նման,
իմ յերկրի նման խնդուն ես հիմա :

Հիշում ես, Լալա, կոմսոմոլ ընկեր,
են անմիտ, անմիտ մանկութունը մեր,
յերբ մոտիկ էլինք աշխարհ իրարու,
բայց հոգում մեր մութ՝ մենք աշխարհ հեռու...

Ձեր պարտիզի մեջ, հիշում ես, Լալա,
քեզ հետ յերբեք հաշտ չեմ խաղացել յես,
մեզ ասում էլին՝ հաբամ ենք իրար,
ոտար ենք իրար, ասում էլին մեզ :

Վանդակում փակված թռչունի նման,
միտում եր ախրադ չարսավում քո հին .
փոր մի աշխարհ եր, ուր հարեմական
զաղտնիքներ կային դաժան ու մթին .

Թուխներ կային դարերից դերված
քո աչդ աշխարհում, կոմսոմոլ Լալա,
յերազներ կային, փոր հրաբխացած
բողոքներ էլին՝ ժաթթքելու լայա :

Հիմա նոր ես դու իմ յերկրի նման,
իմ յերկրի նման խեղուկ ես հիմա.
բացվել ես ահա դարձանս պես արվան,
զարնանս պես դուռթոռ աբել ես, Լալա:

Գլխիդ վառել ես հասարակ մի շալ,
հասարակ մի շալ, գրոշի պես ալ,
վոր յերեկ այնպես փողփողաց, Լալա,
յերկրում քո ամբիւր, հանդերում ամա:

Մի գրոշ եր այդ, բաց միլիոն ժպիտ,
միլիոն սրտերի թրթրաներ ու թինդ
ու ժպտում ելին եդ որը, կասես,
անգամ քո յերկրի մոխրներն անխինդ:

Եդ որը մենք ել հասկացանք իրար
ու ժպտացիր ինձ դու քրոջ նման,
դու քրոջ նման սիրելի դարձար
որերում այս նոր ու լուսապայծառ:

Յեւ յես դարձանքով հիշում եմ մեկ-մեկ,
թե ինչո՞ւ անուշ ձեր մարդն ել յերեկ
ինձ փուշ եր թվում՝ ասեցի այնքան
և այնքան դժգույն և այնքան դաժան...

Յերգլում եմ քեզնով, սիրելի Լալա,
թե սիրտս անուշ մի աղբյուր լիներ,

ձեր ամեն մի նոր թփիկը հիմա
յես կըրեցի, վոր սիրուն աճեր,

Կողբեցի յես շողերով լույսի
ձեր բախչան սիրուն, վարդերը արվան,
թե հոգիս լիներ սիրտն արևի —
հայտնո՞ւմ ես դու, սիրելի Լալա:

1927 թ

Ո՞ւմ մանկությունն է այդ, վոր այդպես չի բուրռ ջ.

Յե. Չարենց

Ինձ ասում են, վոր կոպիտն եմ յես,
վոր չգիտեմ քնքշություն ու սեր
ու յերբեմն ուրազանի պես
դառնում եմ խենթ ու հոգի պես ջես:

— Ինչո՞ւ յես բիրտ, ասում են, այնքան
ու դեմքին քո դարկությունն է իջել,
ա՛խ, այդ մարդիկ չգիտեն, սակայն,
վոր հոգին իմ խայթել են իժեր:

Չեմ տեսել ժպիտ մանկությունից՝
սե կարիքն է յեղել ինձ բնկեր,
ինձ չեն շոյել, չեն փայտալել ինձ,
իմ դաշակը փողոցն է յեղել:

Յես հաց եմ ուղել, իսկ նա՝ աղան,
թքել է դեմքիս ու հուզվել եմ յես.

— Ֆո՛ւ, չարյատան, փողոցի տղա —
ասել է նա ու թեքել յերես:

Իսկ յես, իհարկե, խենթի պես միշտ
բարկությունից շուրթերս եմ կոծել

և հոգին իմ դարձել է ուրիշ —
փողոցի պես բիրտ ու հողմածեծ:

Իսկ մարդիկ կան՝ կշտամբում են ինձ
վոր մոռալ եմ յես, վորպես գիշեր.
ա՛խ, այդ մարդիկ չգիտեն, սակայն,
վոր հոգին իմ խայթել են իժեր:

Յես տեսել եմ հայացքներ միշտ սառ,
համբույրի տեղ թուր ու աքացի,
թույն են սրակել հոգում իմ հար,
որերը հին՝ արյան ու լացի:

Ու ասել եմ մարդկանց անբրտինք
հայհոյել նրանց յես անմեկին
յեւ ինձ համար յեղել է պոռնիկ
վոսկով դարդարաժաժ ամեն կին:

Բայց անցան տարիներ յերկար,
իջաւ մի քար հին կյանքի ուսին
ու թվաց ինձ, թե մայրս յեկավ
գերեզմանից իր խավար աւ սին:

Բացվեց շուրջս մի դարուն հրկեղ,
և ժպտաց ինձ արևը պայծառ.
զգացի, վոր վորք չեմ ել յես
ու կոմսոմոլը դարձավ ինձ մայր:

Ու այսօր, յերբ լինում ե միտինդ,
խոսում եմ մասին հեղամյակի,
— սա նա յե, առում են մարդիկ,
փողոցի տղան ահա նախկին:

Ու վարարում ե խինդս անհաս,
թվերն եմ կարդում հաղթանակի,
անցյալը սին թվում ե յերազ —
փողջուն քեզ, մայր, խնդուն իմ յերկիր:

1932 թ.

Ի Ս Մ Ա Ն Ա Ս Ն

Իջնում ե կամաց մի կապույտ վրան,
ծածկում անտառը սև վիշկաների,
դառնում եմ յես տուն հույսերով մառման
ու դրկում մորդուս կարոտով մի լի:

Պարզում ե նա իր թևերը ողում,
նայում ինձ յերկար՝ աչքերով տխուր
ու յես կարդում եմ նրա հայացքում
անմեղ մի բեղոք, նախատինք մի յուռ...

— Ա՛խ, մի՞թե, հայրիկ, դու ինձ չես սիրու՞յ,
յերկաթի նման պինդ ե քո հոգին,
դու միշտ դարիս ես յերազի նման,
յերազի նման հեռանում կրկին:

— Ներիր ինձ, ներիր, իմ փոքրիկ ընկեր,
վոր այնքան քիչ եմ յես քեզ գուրդուրում,
վոր քիչ ես տեսնում հայրական դու սեր
կառուցման այս մեհ, այս հուր որերում:

Գիտե՞ս, թե ինչքան ձեռներ են դեռ պետք
չարվող այս հակա պատերի համար,
ինչքան յերկաթե սրտեր են դեռ պետք
պայքարում այս մեծ, կոթում այս համառ:

Ինձ հմայել է կառուցումն այս հորդ,
վոր վարարել է լամ դեմ ծովի պես,
նեղի ինձ, լամ սիրտ, մի նայիր ինձ խորթ
վոր այնքան քիչ եմ գուրդուրում յես քեզ:

Ինձ կանչում է աղաբացը այս նոր,
խնդությունը այս անանց դարունի,
վորին, ո՞ր, դու յել կծուլվես մի ուր՝
կղանաս կարմիր կոմունարուհի:

Նայիր, ջահել հույզեր է անճրեում
դարնան արևը միլիոն սրտերում,
աչքերիդ պես ժպտուն՝ շողջողում են
հաղար կանաչ, ասու հեռուներում:

Արշալում են ժամերը խեղժահար,
նրանց հետ սուրում՝ յերկաթե մի վաղ,
ամեն վարկյանում դալում է մի դար —
ու ծնում հաղար մեքենա ու հասկ:

Ներիր, գառնուկս, մի նայիր արտում,
վոր այնքան քիչ եմ յես քեզ գուրդուրում:

Գիտե՞ս, թե այնտեղ, տանկերի յերկրում,
ուր բանկիրին է դեռ կյանքը բերկրում,
ինչքա՞ն վորեր կան, վոր հյուծվում են դեռ
կարիքի՜, սովի արնոտ ճանկերում:

Նրանց հայրերը մեռան բանտերում,
կամ լարերեկադում ընկան մահամերձ —
իզուր ես, մանկիկ, աղապես հառաչում,
մեզ հիմա այն խեղճ վորերն են կանչում:

Յերբ նորից իմ դեմ մայրսն ե ժպտում,
 դաշտի կանաչը շորոքում աճեցես,
 իմ ծերուկ ապի, միշտ քեզ եմ հիշում —
 ճերմակ մաղերդ՝ ձմրան ձյունի պես :

Գիտեմ, սիրտդ ել, մաղերիդ նման,
 ճերմակ ե հիմա, սիրտը քո խոցված,
 մոր բերել ես դու անդյալից դաժան
 անդյալի դառն հուշերով լցված :

Դժգուշն եր անցած դարունը քո հին,
 անցած դարունը հոգուդ պես մթին
 և յարեան սիրտդ՝ արցունքի սոխոր,
 ինչպե՞ս հասկանաւ չոինդն այս հզոր,

Ինչպե՞ս հուզե քեզ մայրսն իմ արման,
 ամբողջ աշխարհի գլուխն այս կարմիր,
 յերբ կանչում ե քեզ մահը քո դաժան
 մեռնող ուրերիդ մշուշից անձիր :

Բայց, տես, թե ինչպես մեծացել եմ յես
 մյանքի հողմերում, հողմերն իմ սրտում
 յեմ իմ դեմ հիմա մայրսն ե յուսե —
 ծաղկող դարունն ե հոգիս պարուրում :

Գարնան պես բացվում՝ աճում ե աշտը
 յերկիրն իմ Զահել, յերկիրն իմ անուշ,
 յես եմ նրա մեջ աճում ամեն ուր,
 մեր դասակարգը հնին՝ մահապույթ :

Յեւ յերբ մայրսն նորից ե բացվում,
 սար ու ձոր թնդում հուշերում հրկեզ,
 իմ ծերուկ ապի, միշտ քեզ եմ հիշում —
 ճերմակ մաղերդ՝ ձմրան ձյունի պես :



Յերբ նորից չողացին դարնան
չաղերը, չողերը անդին
և ծիծղուն ծաղկունքն արլման
փթթեցին, ժարտացին կրկին,
ո՛ր, նորից, չարանե-չարան,
մտքովս վարտով անցան
մեր գյուղը, մեր թաղը ծանոթ,
հանդերը, կարերը չաղոտ:

Հիշեցի յես ահա կրկին
սարերի թովչանքը հրկեղ
ու ջահել որերն անդին,
մոր հիմա զնգում են ալնակն:
Ուր յերեկ մոխիր կար միայն՝
սրտահույզ տեսարան մի լալ,
ուր յերեկ արնոտ եր անդամ
աղբյուրի են ջուրը դուլալ:

Յեվ ախոր որերն ալդ լարկան,
մոր անցան, չքացան անհետ,
թվում ե՛ն չեն յեղել, չկան
մոչ մտրակ, մոչ արցունք, մոչ խան:
Այնտեղ մառ գարունն ե խնդում,
թե ալգում, թե հանդում՝ բակում
յեվ ամեն քարավում, թղմբում
հիմա նոր յերգեր են գնդում:

Յերբ հալչի ձյունը սարերում
ու բացվեն խնդուն վարդերը,
կթնդան նորից հանդերը,
յերբ հալչի ձյունը սարերում:

Կխնդան յերկաթ-սելերը,
յերկաթ ալս հուր որերում,
կբացվեն կանաչ ցելերը,
յերբ հալչի ձյունը սարերում:

Կյանք կառնեն նորից դաշտերը,
բուշխիկ բերքի ծիծաղից,
կումբայնի հրե կանչերից
կյանք կառնեն նորից դաշտերը:

Յերբ կալսենք վոսկի հասկերը,
բաղափն նոր բերք կտանենք,
նոր ուժ ու նոր յերգ կտանենք,
յերբ կալսենք վոսկի հասկերը:

Փ Ո Տ Ո Ւ Ն Ե Մ Տ Ո Ւ Ո Ւ Մ

Դարձել եմ նորից յես հեռուներից,
կարտախ անհուն հրերով հրկեղ
ու նորից քո բյուր մատաղ կանչերից
հուզվել ե հոգիս՝ գինով եմ կասես:

Ո՛ր, մորքան ել աչն գյուղերը հեռու,
դաշտերը անձիր և դալարապիտ
բարդյինները սեղ, վարձած իրարու,
չչնջան հուշիկ իմ գանդում հափես:

Բայց ամէլի յեմ քեզ սիրում, Բագու՛,
չոխեղների ծով, իմ հուշի գարուն.
դործարաններից կանչը յուսատու
ցնցում ե հոգիս — քո տունն եմ տանում:

Տեսել եմ յես քեզ յերեկոյա դաժան
փոթորիկներում և մրրիկներում,
ուր նախճիրների կրկեսում աչն ժամ
մահ եյիր թքում դու միշտ ու արյուն:

Յերբ քո արյունոտ մզմախանջներում,
կապարից՝ ծանր քո գիշերներում,
սարսափն եր շրջում մոռյլ ու անձաչն
և ուրախկանը՝ հեղափոխության:

Ուր հրամայած բոմբերը շաչող,
թնդանոթների շոխոք մոլի,
որերիդ յերգն եր, յերգը՝ ճարակող
բարբիկաղաներիդ, շունչը՝ քո լեզի:

Ձեր տունն ե տանում աշտո իմ հոգին,
ձեր յուսապայծառ խնդերով լցված,
դուք՝ դործարաններ, միջկաներ անդին,
դուք՝ հուղումներիս սրորսն անլաց:

Տեսել եմ յես ձեզ յերեկոյա մուծում,
մթնըշաղկրի գորշ շղարչներում —
խորտակված, անբան, դալուկ աչնան պես
մոռյլ ու մեռած, ու դաժան աշուպես:

Յերբ հեռու, մոտիկ բարբիկաղաների
անհեղաշինդ հրերով մատված,
ձեր սիրտ ու հոգի՝ բանփորր արի
դարերն եր ցնցում կյանքից հալածված...

Ո՛ր, մողջույն, մողջույն բանփոր ընկերներ,
ձեր մաքի, հոգու աչն թուխքներում,
յերբ թուխք ե և ներկան հրաջեռ —
ձեր խնդով լցված, ձեր կամքով ամուր:

Յեկել եմ նորից հեռուներից յես,
կարտախ անհուն շողերով մսեմ
և շուրջս՝ տենդ և և շուրջս՝ հրկեղ
ու տոն և աշտո իմ հոգում յուսե:

ՅԵՅ, լորդի, միլորդի յերկիր,
յերկիր՝ տախանքի ու արյան,
պալատներ ունես բարձրագիւր —
արնոյ էն քարերը ներկած:

Վոսկենախ՝ ջահեր ունես դու —
բյուր հոգու հրոյ էն վառված,
բյուր սրտի արնոյ էն հարբում
տերերդ՝ անկշտում, անտանձ:

ՀԵՅ, լորդի գիտեիրա յերկիր,
չանտանի յերբող յերկիր,
ծովերիդ ջրերն էն հուզվել,
մրբկվող ցասումի յերկիր:

Բանտերիդ թիւ, համար չկա,
բանտերի անարե յերկիր,
բայց աբդեն վառվում էն ահա
բյուր սրտեր վրեժոյ վերքի:

Կարմրում է յերկինքդ արդեն
արյունոյ միլիոն զոհերի,
վոր րնկան բանտերում մթին,
կախեցին սյուներից անթիւ:

Արնախում, արնաներկ յերկիր,
չեն ացել մաթթերից քո դեռ
հետքերն արյունոտ վերքի —
չինում էս դու նորից տանկեր:

Թողել էս դու վորբեր անթիւ
աշխարհի տմեն մի մասում,
վորպես վկաներ կենդանի,
սրտերում՝ վրեժ ու ցասում:

Ձի սառել անեծքն արնոտ
զոհերի շուրթերին քո վառ,
չի անցել հոտը վառողի
քո արնոտ դաշտերից խալառ:

Բայց նորից վոսնում է ահա
արնաշունչ ու դաժան քամին,
վորպես չարախինդ սուրհանդակ —
նոր կովի յուրը շուրթերին:

Ո՛ր, գիտեմ, գիտեմ, վոր մահվան
զարարքդ է, ցնցումդ է վերջին,
առել է քեզ դողը ձմռան,
սպասում էս որերի «դարձին»:

Ռումբերը, վոր պիտի պայթեն,
քո վերջին քրքիջն է, գիտեմ,
յերգում է կարասը արդեն
քո մահվան տխուր մեղեդին:

Ո՛ր, նալիր, թե ինչքան շարքեր
բարձրացել, կանգնել են քո գեմ,
Հովտեմբերն իր յերդն ե մատել
նրանց հուր սրտերում արդեն:

Կնկնեն քո տերերը վամպիր,
կպալթեն ումբերը մի որ.
դեռ կգամ շարքերում կարմիր,
մոր յերգեմ լուսալուր քո նոր:

1931 թ.

(ԲԱԼԼԱԴ)

Հե՛յ,
սավտի յերկիր,
ֆարին ու հողին
շուկն տվող յերկիր,
այն ո՞վ ե վարում
քո մեծ պայքարում
հաղթանակներիդ
նավն արևկա.
— Իլիշը հսկա:

— Հե՛յ,
արևելի,
արևելի,
մխացող վերքի
ցավից մրկված
և հողմահալած,
իմ բյուր յեղբայներ,
վոր փոքորկվում եք
այդ սրտակեղեֆ
սովի, բռնաբռն,
կարիքի դեմ հեգ,
ո՞ւմ արյունն ե այն
ձեր յերակներում

հորդում միշտ անահ,
— Իլիչի անմահ:

— Հե՛յ,
Բոմբեյ,
բեյ ու խանի դեմ
ապստամբ Բոմբեյ,
անոթի, անփուն,
բարիկաղներում,
փողոցում, հանփում
դահիենների դեմ,
կամփով յեղկաթե,
հե՛յ դուք, պայֆարոզ
բանվոր ու իշչի,
ո՞վ ե ներշնչում
ձեզ ուժ ու կորով.
— սիրտը Իլիչի:

— Յեվ դուք,
բանտերում
դպրակ ու դռդռոջ,
հիվանդ, սնոթի,
կարտո ընկերոջ,
արևի, ող,
իմ բյուր ընկերներ,
ո՞վ ե միշտ ապրում
ձեր հոգում ու ձեր
հույզերի միջին.
— կամփը Իլիչի:

— Յեվ այսպես, ահա,
Իլիչն ամենուր
շրջում ե հիմա
հաստատ ու արթուն,
աշխարհի բոլոր,
բոլոր կողմերում
ու վարպես գիտուն
ու փարաված պիլոտ,
դեկրն ե վարում,
կամփով մի արի,
համայն աշխարհի
մեծ Հոկտեմբերի:

Ապաստում եմ քեզ հիմա, Ռիմա
հորդում ե կարոտս՝ ջրվեժ.
Իմ հոգում մի մաղք ե դռնիում,
դռնիում են մրրիկներն անդերջ...

Ո՛ր, ծանր ե, ո՛ր, ծանր ե Ռիմա,
սպասումի մարկաններն ալրող.
Երբ պիտես, միտ հեռվում հիմա
կա մի սիրտ, անհանդիստ մի շող:

Կա մի սերք հեռավոր յերկրում,
մոր աչքեն բերկրում ե հիմա,
սիրտս աչապես խինդով ե յերկնում
հանդիպման. սարսուռ, Ռիմա:

Բալլի ինչպե՞ս պատմեմ յես հիմա
հմայքն արթնացող յերկրիս
յեմ աչն, միտ անուշ ե աչնքան
յեմ աչն, միտ պզում ե հոգիս:

Իմ շուրջը մաշկնն ե հեռում՝
յերկնիժե ծիծեռը պարնան,
սրտումս մի խինդ ե թռվում,
խինդից ել դու քաղցր Ռիմա:

Անցնում ե հանդերով հերկը
դարունքի ջրերի՝ նման,
տենդով ե միշտ լցված հեմքը
կստուցման աչս շփոթ որմա:

Ո՛ր, գիտեմ, ո՛ր, գիտեմ հիմա
գժողք ե կյանքը քո յերկրում —
հրի պես մարմնուն Ռիմա,
ինձ հուզող հեռավոր ուրու:

Մեր կյանքն ել սե եր ու դառն,
յերբ յերեկ մենք յեյանք գրոհի.
մեր ճամբին՝ արնոտ եր ատուն,
մեր ճամբին՝ սարսափը սոսի:

Ո՛ր, կզանք, դես կանցներ հրով
յեմ ատուն կարտավի դողդոջ,
գուցե ե միջրավոր թևով,
բալլի կզամ յես հոգով ատողջ:

Յես կզամ՝ կբերեմ քնձա
սիրտն իմ քո հիմանդ յերկրին,
յես կզամ, կոմսոմոյ Ռիմա,
սրտումս հոկտեմբերն անդին:

Հեռուներիս կարոտն ես դու, Ձուբեյիդա,
անուշ ես դու յերազի պես հեռավոր.
դու ապրում ես հուզերի մեջ իմ արեկա,
հուշներն մեջ իմ գարունն հրարորը:

Անձանոթ եմ քո աշխարհին, Ձուբեյիդա,
քո աշխարհի հարեմները չեմ տեսել.
ինձ պատմել են հեքյաթի պես անիրական,
քո մասին ել ուրիշից եմ յես լսել:

Ինձ^ժասել են, մոր մաշխայան մի առափոս,
ծաղիկներն խառ թերթերը դեռ չաղոտ,
ալ վարդերից սիրուն պսակ քո ճակտին,
նախ տարան, քնձայեցին քեզ չահին:

Քո հյուսերը հյուսել էին յոթը դարուն,
յոթը յեռան, յոթը սարի հեռուն.
քեզ դերեցին հարեմներն անապուրուն
ու մարեցին արևները քո հոգու:

Գիտեմ, քուրիկ, ուրույի պես հոգիդ անքուն
մնարում ե միշտ շոյանքը նուշ անուշ մոր
ու սրտինդ աստղերին ես պատմում թաղուն,
ծաղիկներին ու հովերին մեղմորոր:

Ապրում ես դու աշխարհն ավելինքում,
փականք դրած քո սրտին ու մտքերին.
քեզ թվում ե գանգուրներից հայրդ ե շոյում,
բայց սառն ե աշխարհի մահու թրթիւր:

Շուրջդ գիշեր, դառը հուշեր սեռատարած,
յեվ գիշերը հառաչներին քո վկա.
քո հոգին ել հարեմի պես մի բանտ խավար,
աչնան նման միշտ դայիկահար ու յարկան:

Բայց ծանոթ ես իմ աշխարհին, Ձուբեյիդա,
իմ աշխարհում չկա հարեմ, չկա լաց
ու յերկիր ե կառավարում ախտեղ հիմա
մի Ծաթիմա, իր մտքերը արեած:

Նա յեկ քեզ պես, Ձուբեյիդա, կույր եր յերեկ.
չի դգացել յերջանկության մոռ մի դող,
չեն ժպտացել ու չեն շոյել նրան յերեք
մոռ մի դարուն, մոռ մի արեւ, մոռ մի շող:

Բայց մի որ ել, հրակարմիր արշալույսին,
ազատության դրոշը մառ փողփողաց
յեվ արեւը շողեր փուեց նրա ուսին
չարսավի տեղ և սիրտաւ շողշողաց:

Տես, թե ինչպես յերգն ե դնում մեր վարպուուն,
խնդր՝ հուշիկ ջրերի պես կարկաչում,

յերգը՝ գարուն, գարունը՝ յերգ մեր սրերում,
աշնակա զվարթ, աշնակա անուշ խոխովում:

Դու չե՞ս լսում, չե՞ս լսում դու, Ձուրե յիգա,
սամպի նման քո՞ղն ե իջել քո դեմքին,
ու չի՞թ առ չի՞թ արցունքները քո մարդարոյա,
ու լուների պէս չարմել են քո աչքերի՞ն:

Բայց, տես, նորից կանչում եմ յես աշապես ուժգին,
աշապես մոտահ ու համառ ե յերգն իմ.
Իսկ գետի պէս ժամանակը միշտ հորդահաս,
բարդում ե հար իր ամերին բյուր ակոս:

Ու թռչում ե ժամանակը մինչ յերագում,
Նրա ուսին դասակարգն իմ հաղթական.
Նա գալիս ե՝ իր հետ բերում յերգ ու հուզում,
բերում ե քեզ մի նոր արեւ, մի նոր կյանք:

1928 թ.

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

Ո՞վ կարող է չափել անհունը անծայր —
անհունից խոր է խոհերիդ հունը .
պայծառ դրոշ է քո վեհ անունը ,
ո՞վ կաշուդ է չխփել անհունը անծայր :

Դու արեւում ես մեր ուղին պայծառ
ու դարը փեղկով վեհ ու խնդուն է .
ո՞վ կարող է չափել անհունը անծայր —
անհունից խոր է խոհերիդ հունը :

1933 թ.

Յերբ դրսում անձայն լուսինն է շրջում,
 յեկնում ափերից հույզերիս առուն,
 դու ժպտում ես ինձ, վռնց լուսե գարուն,
 յերբ դրսում անձայն լուսինն է շրջում:
 — Յերգիր, ասում ես, վերջի՞ք ու շարժում,
 յերգիր այս դարը խինդով վարարուն —
 յերբ դրսում անձայն լուսինն է շրջում,
 յեկնում ափերից հույզերիս առուն:

1933 թ.

Բարդիներն եմ բաց պատուհանիս տակ
 Վ. ՏԵՐՅԱՆ

Պատուհանիս տակ նոնվում է բարդին,
 Հովերը հուշիկ շնջում որոր —
 Ո՛ր, ինչ ուրախ է իմ սիրտն այսոր —
 Պատուհանիս տակ նոնվում է բարդին:
 Գալունն իմ փեղկից նայում է շորոր,
 Հեռվում վոնջում յերկաթե մի խինդ,
 Ո՛ր, ինչ ուրախ է իմ սիրտն այսոր —
 Պատուհանիս տակ նոնվում է բարդին:

1928 թ.

Յես կկրեմ, վարպես դրոշ,
 քո անունը արևավառ.
 խնդուք յունդ հրավարար
 յես կկրեմ վարպես դրոշ:
 Մրրիկներում հնի դեմ գորշ
 յեվ մարտերում ստեղծարար,
 յես կկրեմ, վարպես դրոշ,
 քո անունը արևավառ.

1933 թ.

Յես չեմ մոռանա, մայր իմ քանկագին,
 դավուք յունդ քո խամրած այտերի,
 արցունքները քո դաժան որերի.
 յես չեմ մոռանա մայր իմ քանկագին:
 Դու դեռ չհասած այս ախեր նանգին,
 խորտակվեց նավը քո յերագների.
 յես չեմ մոռանա մայր իմ քանկագին,
 դավուք յունդ քո խամրած այտերի,

1930 թ.



Դու միշտ անմար կմնաս,
խորհրդային խնդություն,
մեր սրտերի հնոցում —
դու միշտ անմար կմնաս:
Թող փառքի դեմ քո անհաս
դեռ վնգստան հազար շուն
դու միշտ անմար կմնաս,
խորհրդային խնդություն:

1933 թ



ԱՐՏԱՍՍՀՄԱՆՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Դեռ կշողա արևը վառ
ձեր անարև այդ աշխարհում.
հոգիներում ձեր հրահուր—
դեռ կշողա արևը վառ:
Ո՛ր, ընկերներ իմ հեռավոր,
նորից գրոհ ու մափառում..
դեռ կշողա արևը վառ
ձեր անարև այդ աշխարհում.

1931 թ.



Մենք անհաղթ շարքերով կելենեմ,
յերբ հնչի շեփորը կովի.
յերբ նորից աշխարհը վառվի,
Մենք անհաղթ շարքերով կելենեմ:
Հեյ՛, զգաստ ու պատրաստ լինենք,
պղտոր են ջրերը առվի,
մենք անվախ շարքերով կելենեմ,
յերբ հնչի շեփորը կովի:

1932 թ.

ՓՈՔՐԻԿ ՊՈԵՄՆԵՐ

Կծկիկեց թելը լույսերի,
քուն իջավ հանդերի մրա.
լուսինը շարժադ ուսերին,
յերեկոն արձակեց մրան:
Ու նորից ակումբում դյուլի
չողացին մարդագույն լույսեր,
զրնդաց սաղն աշուղի,
սաղի հետ՝ յերգերը լուսե .—

I

— «Դադստանի բաղերի
անդին մարդն եր Զահիրան,
աշուղների խաղերի
մոսկե դարդն եր Զահիրան:
Նա իր տեսքով, թե ուղեր,
բլբուլին կաներ դերի,
ասողերին էլ կհուլեր
են Զահիրան սարերի:
Արևի հետ միշտ հառնում՝
հանդ եր գնում Զահիրան,
զնգում էյին՝ հող, առու,
մաշինի դեմ հաղթիրան:
Կուլեկտիվի արևն եր
կոմսոմոլկա Զահիրան,

խնդրում ելին նաքերն ել
 նրա թովփից հուրհրան :
 Նրա ցանաժ արտերը
 ժպտում ելին վարդի պես ,
 բացվում՝ ծանոթ սրտերը ,
 նրա պահաժ արտի պես :
 Գովքն արա , ալ լամ սնդ ,
 նրա գործի ու սերի .
 նա հանդ դնաց , մոնց յերանգ ,
 լուսնի շողքը ուսերին :
 Հանդում միտինդ արեցին —
 նախագահ եր Զահիրան ,
 սրտերում խինդ վառեց իր
 սոցմրցումով Զահիրան :
 — Վոչ մի նահանջ , առաց նա ,
 մոչ մի դիջում դուշմանին ,
 մեր յեռանդը՝ անսահման ,
 ել յեսիր չենք մենք խոսին :
 Բամբակ ցանենք , առաց նա ,
 յերկիրը մեր սար անենք ,
 յեկեք մրցենք , առաց նա ,
 մեր մինը հաղար անենք » : —
 Տրակտորը չափ առավ ,
 քողաց թխկին մենավոր ,
 մկանները թափ առան
 են հանդերում դարավոր :
 Լուսինը շողեր թափեց ,
 աստղերն ուրախ պարեցին ,

ասուն հանդը սաղափեց
 յեմ աղոսներ չարեցին ...

II

Հեյ՛ , Զան աղջիկ , Զեյրան աղջիկ ,
 սեդ սարերի ջիւման աղջիկ ,
 դարունից ել թովիչ ես դու ,
 սափետի՝ հե՛յ , դարուն աղջիկ ,
 Հանգիստ չունի աչուզ Նովան ,
 կյանքը կտար թե ուզեյիր ,
 բլրուն անգամ , վարդը թողած ,
 յերդ ե հյուսում քո հուլիւրից :
 Ախ՛ , թե հոգիս յիներ զրահ ,
 են սարերի սերը վկա ,
 կբացվեյի կրծքիդ վրա ,
 մոր թշնամին յիներ անկար :
 Կհակեյի անքուն ու հար
 գիշերները յես քեզ սիրով ,
 թե մոր յիներ լուսին մի վառ
 խեղճ աշուղիս սիրտը սիրող :
 Հեյ՛ , Զան աղջիկ , Զեյրան աղջիկ ,
 սեդ սարերի ջիւման աղջիկ ,
 դարունից ել թովիչ ես դու ,
 սափետի , հե՛յ , դարուն աղջիկ ,

III

Գիշերը՝ մի սև սալան ,
 իջավ հանդի ուսին ,

Գիշերը՝ ծով անսահման
յետի անլուսին:

Ձահիրան դառնում էր տուն,
սրտում՝ մարման խիղեր,
իսկ շուրջը՝ խափար անհուն
ու դորշ հանդեր:

Գանդում էր մաշինը դեռ
նրա մտքի հեռուն.

հիշում էր աճող թվեր
ու մաքառում:

Բայց ահա շուտ մի չար...

Յետ սուրբ Գիշերում մութ...
սարսուեց խափարը քար
ու անխորհուրդ...

Կուլակը, դարան մտած,
դավ էր նյութում հանդում,
Գիշերում այդ անհասարկ
ու անխնդում...

— Ո՞վ է — ձայնեց Ձահիրան.
կաղնին դեմի դողաց...

խափարում չիսկաց մի բան
ու շողշողաց:

Գիշերը՝ մի առ սաման,
իջավ հանդի ուսին,
Գիշերը՝ ծով անսահման
յետի անլուսին:

IV

Գնդակը ողում ծափեց,
քարերն անգամ լուռ լացին,
խավարն էլ աբցունք թափեց
ու սարսուեց ակացին»:

V

Արյունոտած վարսերով
նա ընկած էր անկրակ
ու արևը վառ սիրով,
բիզում էր վերքը նրա:
Աչքերում՝ անսահման վիշտ,
սրտերում՝ վրեժ մի հուր,
կաղնեյ էյին ակնասփռ՝
ընկերները նրա բյուր:
Լուռ էր մաշինը նրա -
բամին չերդում էր մահերգ,
թառամեյ էր Ձահիրան
վարդի նձան արնաների:

VI

Ու ձայնն աշուղի հուղմունքից դողաց,
խզվեցին սաղի լարերը կասես.
նախեց լուսինն էլ փեղկից կխաբաց,
դարձիկ ու դեղնած — Ձահիրայի սկես:

«Բայց առաջիկա լուսաբացին —
 ալբի կաթնի շողերով,
 քնկերները հանդիմացին —
 սարսուռ անցավ հողերով:
 Դողը սրտում մաշինն ելավ,
 արնոտ հողը շուռ տալով,
 ուժը հորդեց, վերպես սելավ —
 բացվեց որը խնդալով:
 Յանքսն արին. անցան ուրեր.
 հարվեց ձյունը սարերի.
 հանդը հապավ սիրուն շորեր,
 ներկած չոգոսն արեւի:

VIII

Ու ասում են, թե գիշերով,
 կամ շողերով արեւի,
 բարձրանում է, մառ հուշերով,
 են Չահիրան սարերի:
 Բարձրանում է ծով արտերում,
 ցողուններում հասկերի,
 կառուցման մեջ ու մարտերում
 և խինդերում մաղքերի:
 Գրոհում է թշնամու դեմ,
 կոխողային միջոցներում,
 մաշինի հետ թնքում և դեռ.
 համառարած դաշտերում:

Ու հսկում է նա արտերին,
 մառման խինդն աչքերում,
 բույրն է ծծում նա մաղքերի,
 սարի նախշուն լանջերում:

Ու յերբ դավ են լարում կրկին
 բարիքի դեմ կոլխոզի,
 խոռվում և նրա հողին,
 ջրերի պես Արարի:

Ու շրջում է նա ամենուր,
 մոտենում է ամեն տան,
 բաղխում է նա ամեն մի դուռ
 ու ձեն տալիս հաղթական —
 — կոլխոզի դեմ դավ և նյութում
 մեր չարանեղ թշնամին,
 հեյ՛, քնկերներ, յեղեք արթուն,
 անհաշտ կույի այս ժամին:

Ու կարճելով սարեր ու ձոր,
 հեռանում է նա ելի,
 չուրջը փոխած՝ հասկերը ծով,
 համառարած արտերի»:

IX

Լոեց աշուղը: Յեւ այրող մի քար
 ծանրացավ անթիվ սրտերում անանց.
 Իսկ հեռվում քամին դեռ յերկա՛ր, յերկա՛ր,
 մի յերգ եր կառես մրմնջում կամաց, —

«Դադատանի բաղերի
անդին վարդն եր Զահիրան,
աչուղների խաղերի
վոսկե դարդն եր Զահիրան»:

1933 թ.

Լ Ո Վ Բ Ս Տ Ս Ն

Զյուն ե:

Բուքը դաժան
հունդում ե ահա փողոցներում խալար,
փողոցներում անմարդ ու ձյունների վրա
հեծեծում ե, կասես, մի վիրավոր դադան
ու յեղնում ե ծովը, հորձանքներով վարար,
իր ամերից անձուկ,
փորպես շալա
ու ծուխ:

Ու գիշերը խալար

ու գիշերը մռայլ,
փորպես ահեղ մի ձեռք, փորպես հսկա մի քար,
ծանրացել ե ահա տանիքների վրա:

Յեւ այդ դաժան պահին,
յերբ ծառեր ե պոկում
խելադարմած քամին,
արեւ մառած հոգում,
հազած ձյունե պատան,
շտապում ե Ալին
դեպի Լոկ — Բատան:

Չբինի՞ թե հանկարծ դարհուրելի քամին
բուրդեր հանի շարքից ու հորերը նավթի,

ուր գործել են որեր ու գիշերներ քանի,
վոր յերկիրը առնի նոր բարձունքներ անթիվ:

Ու քայլում է Ալին,
Համառում է Ալին
Մըրկի գեմ կասես
գոտեմարտի յեւած:

Վորպես վալրադ մի արջ, ատամներով անտես,
քաջքշում է բուքը քղանցքները նրա:
Իսկ նա յեռանդ առած,
հագած ձյունե պատան,
չտապում է առաջ,
դեսի Լուկ — Բատան:

Այնտեղ անապատ էր, մեռելային մի դաշտ,
ուր չարքերի նման, ասպններում աննինջ
գաղաններն են պարել ու հոգմերը անհաշտ
յեւ Հանդիստը նրանց չի խանդարել մոչինչ:
Այն ո՞վ է խռովել ուրբանը հողմերի,
ո՞վ է կանգնել հիմա հողմերի գեմ համառ
ու վախել են ահից գաղանները վալրի,
նոր որեր են յեկել անապատի համար:
Այդ վալրերում անմարդ, ասպնների վրա
բարձրացաւ յերեկ բուլնայիկի ձեռքը
ու յերկաթը յերգեց, յերգեց հողը ուրախ
յեւ անուշ էր ախքան այդ զարթոնքի յերգը:

Ու հիշում է Ալին
գիշերները յերկար,

գիշերները տենդոս
յեւ պալքարը համառ
տարրերքի գեմ մոլի,
ջրելի գեմ վարար
և անձրեւի յերգող,
ավաղների վրա:

Բայց չբեկեց մոչինչ նաւը նրանց կամքի,
չսասանեց նրանց և մոչ մի անդունդ.
Նրանք պատվով տարան հաղթանակներ անթիվ
հերոսական մարտով, աշխատանքով անդուլ:

Յեւ յերբ բուքը հիմա
սուլոցներով հիմար,
վիշկաներ է պոկում
ու քրքում մոլի,
մի ստաղնապով հոգու,
յեւած անուշ քնից,
հանք է գնում Ալին —
ընկերներին ոգնի:

II

Մռայլել է Կարոն, յերկնքի պես խաւար,
տապալում է բուքը պլանները հանքի.
լուսարացը՝ հեռու, գիշերը՝ յերկաւ,
ինքը մենակ ալդտեղ, զարհուրելի բուքին:

Անպատրաստ եր հանքը. արդեն բուք է, բորան,
նալթահորեր անթիվ ձյունների մեջ կորան.
հայհոյում և Կարոն այս վայրումնքը հակա
յեվ փոկերը շինում անխիմեղ ընկած:

Ու թիում է նրան, թե գիշերում արդ սև,
փորձում են ահա ինչ փոր ահեղ դավեր
ու բուքի հետ դաժան, բուրդերի դեմ, կասես,
բարձրանում է ինչ փոր թշնամական մի ձեռ:
Թրախի... ումք եր կասես, հոնդյունով պայթեց
ու տապալից մի բուրդ, ընկալ ձյունի վրա.
առաջ վաղեց Կարոն, ինչ փոր սարսուռ պատեց
ու քրքշայ բուքը ականջներում նրա:

Ահա նորից Կարոն կոխիները հիշեց
ու պատկերներ անցան աչքերի դեմ նրա.
կռվում էյին հապես մի սևաթուղթ գիշեր,
ձեռակների բանդան յերթ թափում եր կրակ:
լցրել եր բուքը խրամատները ձյունով
յեվ գինյուրներ անթիվ սառել էյին ցրտից,
կարմրել եր ձյունը ընկածների արնով,
բայց աննահանջ իրենք կռվում էյին նորից:
Ու թիում եր նրան՝ նույն կոխին է ահա,
այն ո՞վ է մոտենում գաղափարողի ու լուռ...
հե՛հ'յ... Ո՞վ կա եղտեղ, ձայնեց Կարոն անահ
յեվ բուքի մեջ կորալ արձագանքի առուն:
— Յես եմ, Կարո, Ալին, քեզ ոգներու յեկա,
թե չե՝ քանդեց հանքը այս անխիժած քամին»:

Յեվ գիշերում արդ սև, մրրիկներում յերկար
յերկու ձեռներ սիրով փաթաթեցին իրար:
Դալարքներով վայրագ բուքը փոռնաց ելի,
յերավ ծովը ափից հորձանքներով վարար.
հողմերի դեմ դաժան, տարբերքի դեմ մոլի,
շրտեցին նրանք — յերկու հերոս համառ:

1933 P.

Հեռու յե, հարուստ ե Գլխիւան*),
լուսնի պէս փայլում ե փոսկին.
առատ են հողերը աշնան,
յերկիրը՝ բեռնաքաջ՝ փոնց ձին:
Լոնդոնից Ջորջն ե յեկել,
գարձել ե յերկրին իշխան
ու փոսկին իր համար՝ փոնց սել.
արեն ել ժպտում ե նրան:
Բանում են հողերում՝ արթուն
բոլոր ճորտեր՝ նեղր ու հեղիկ,
յերբ հանդարտ աստղերն են թարթում
լուսնի դեմ՝ արշուճոտ կարիք:
Բանում ե փորդու հետ Գարան.
Գարան՝ ծեր, մոմի պէս դեղնած.
հողերը ձեռներից առան,
ու մնաց ոջախը մարած:
Վորդին ել արյուն ե թքում,
հոր սիրտը մորմոքում թաղուն
— «Այց թե նա կմենի... հանկարծ.
աշխարհը կմթնի հողում...»
Մտքերը, կասես թե քամին.
անցնում են հանդերով՝ գողում
փայլում են աչքերը կրկին

*) Գլխիւան անգլիական դաղույթ ե:

Ու բաճը թաղում ե հողում...
Քունն ել թեկուղ ե՝ անուշ,
ծալլում են ծնկներն ել անուշ...
Ի՞նչ արած... հիվանդ ե կինը.
Իսկ տանը՝ մի թանձր մշուշ,
Բալց Ջորջը, լոնդոնցին միշտ գոհ,
պալատում, փոռնոցով արջի,
պարում ե գիշերով տանդո.
ու լիլում փոռքերը հարձի.
Հնչում են խավարում՝ կրկին,
Չութակի լարերը խզված,
նրջի պէս պարում են, կասես
սեղանի շիշերն ել հարած:

II

Մեռնում են մարդիկ մահով մի դաժան,
ուղեղներում մութ՝ սարսափը մեխվում.
անցնում ե կյանքը թիթեռի նման —
— ցավ կա, ստում են, մեր ես քաղաքում: —
Բահերը բռնած, հեռու հանդերում,
բնկնում են նրանք, հասկեցի պէս լուռ,
չգիտեն, սակայն, ինչից են մեռնում —
քարացել են վրդ, մուգովիլ անլուր:
Ճաշում են նրանք տիրոջ սեղանիդ.
անուշ ե, կասես, միտն ախոր թվում,
բայց տուն չհասած՝ ընկնում են ճամփին,
մեռնում են նրանք հեռու հանդերում:

Տանում են նրանց, թաղում են նրանց...
բայց թե ո՞վ... և ո՞ւր... չգիտեն կրկին...
կրկին դիակներ, սարսափը անաղ —
լալիս են տանը յերեխա ու կին։
Գնացքն է կանչում, կասեւ թե՛ լալիս...
Հնդկաստանից է, ստում են, գալիս...
ընրում են կրկին ճորտեր անհաշիվ —
այդ մարդիկ, կասես, ծխել են հաշիշ...

Անգործ չմեան բահերը հանդում,
մեքենաները չկանգնեն հանկարծ...
ինչ փուլթ, թե նրանց չիղիմի են քանդում,
ինչ փուլթ, թե մահն է սպասում նրանց։
Միայն լուսավոր պալատն է Ջորջի
ծաղրում գեռ մահը, նախգում՝ անուշ...
պարում են հարբած չիչերը ելի,
պարում արջի պես, գիշերները ուշ։

III

Շնեկ է Գարան, անուժ է Գարան...
արցունք չի գալիս աչքերից արդեն...
մեռել է մորդին, թաղել են նրան
անլաց, անչիրիմ, թե ո՞ւր — չգիտե։
Բայց մի մուլթ կտակած դուրում է սրտում,
աչքերում փայլում վրեժի մի հուր...
Իսկ ինչո՞ւ միայն ճորտերն են մեռնում,
այս խաղ է մի չար, թե՛ պատրանք հոգու։
Ու համարքում են բանիոր ընկերներ,

կաղմում են խնջույք հանդում հեռավոր...
սեղան է սարքում խոհարարը ծեր —
սոստ են կրկին մսերը այսոր։
Բայց ձեռք չի ալլիս մոչ միք նրանցից,
կատկածն է աճում մորդի պես ելի,
ծանրանում՝ մուլթը սրտերում նորից —
— «Բարի յե Ջորջը... կենացը Ջորջի»...
Ու չրթկում են բաժակներն ելի,
յերդում են նրանք, թափով հրհուում,
յերը դեռ քաղաքում մեռնում են ելի,
յերը սուգ է արնոտ մոլորված յերկրում։
Հարեկ է արդեն խոհարարը ծեր
ու քրքջում է ատամները բաց...
նայում են նրան հարցական դեմքեր...
— «Ջորջի կենացը» — աղմուկը թնդաց...
ու բաժակները բարձրացան կրկին,
խոհարարը ծեր քրքջաց ելի
ու մուլթ մի ատկեր չողաց աչքերում։

— Դուք, հիմար նեղրեր, — ասեց՝ քրքջ —
պաշտում եք ելի ալլահին ձեր սոստ,
մաշում ձեր կյանքը, բայց ելի սոված,
անվերջ մեռնում եք խախարներում մուլթ։
Ուտում եք հոտած մեռեյները ձեր,
ծամում սրտերը ձեր ծանոթ մարդկանց
բայց ելի սիրում տիրոջը մեր ծեր,
խում կենացը այդպես մոլորված...
Որորակց կասես սեղանը հարբած,
չիչերը տեղից հանդարտ սահեցին

ու ափսեհներում, կ'ստես արթնացած,
մեռելները լուռ անեցը կարգանքին:
Ու նայեց Գարան, թվաց, թե փորդին
բարձրացավ իր դեմ, արյունոտ դեմքով,
աչքերում՝ գալուկ տխրությունը հին —
սահեցին նորից շիշերը շարքով:

IV

Մենչաց Գարան, առյուծի նման,
ճորտերի սիրտը մատակց գայլուկից:
չարժակցին նրանք, փոնց սելը գարնան,
փոր մսուեն Ձորջի պալատը հիմքից:
Բայց կրակ տեղաց ամբոխի գլխին,
բարձրացավ փոշի ճամբերի վրա,
արնով ներկեցին տապը դեղին
այդ կես գիշերին, հանդում այդ ամա:
— «Հիմարներ, հանկարծ մրմնջաց Գարան,
Ու ձեռը տարավ արյունոտ կրծքին,
բայց չե՞, չեք թաղի դալլուկին այս՝ ովկյան,
աշխարհի սիրտն ել մեկքոտ ե հիմա»:
Ու մեռավ Գարան, քաղաքավ Գարան,
անեծքը սառավ դեպնած շուրթերում,
արևը յելավ ամպի պես մուգը
ու կանչեց մի բու հեռու հանդերում:

1933 թ.

ՓԱՐՈՒ ՀԵՐՈՍԸ

(ԲԱԼԼԱԴ)

Քամին ե սուլում, շաղկած լաթեր,
անապատում գորշ, քամին վատաղած
ու քամու նման արագ ու թեթև,
վազում ե ահա մի փոքրիկ տղա:
Խնդիր ունի նա, տղան աշն անվախ,
կարմիրներեց նա ունի հրաման:
— ճեղքել թշնամու շրթան անհապաղ:
չտաբին իրենց հայնձնել մի նամակ:—
Ու նա համարձակ քայլում ե առաջ,
չուրջը՝ սարսափը հրի ու սրի.
յեղնում ե ահա տապը սառած՝
թրի պես իջնում նրա ուտերին:
Ընկնում ե նա ցած, բարձրանում նորից,
նորից տապի շուրջպարը հակա...
խակ նա վազում ե ու նրա յետքից
քամին ե սուլում փորպես մոտրիկան:—
— Ե՛յ, կանդ առ... այդ ո՞ւր... դեղակից ամուր
փորտաց մի ձախ: — Ամեն ինչ կորավ:—
մրմնջաց տղան ու տվեց քամուն
պատում՝ նամակի կտորներն արագ:
— Լրտե՞ս ես յեղել, սատանի ճուռ,
(ու յավեց դեմից հրացանի շառաչ)

Դե,
ընկիր առաջ,
չուտ:

Հոնդաց նորից քամին՝ խենթահար,
ավաղր պարեց դիրքերի վրա
ու գիշեքը մութ, վորպես մի սև քար,
ծանրացավ նորից սրտերում մոռյլ:

II

Նայում ե սպան աչքերով իր ծուռ,
աչքերում նրա՝ մահ ու կախաղան.
խսկ դեմը՝ ահա, արձանի պես լուռ,
կանգնել ե հպարտ, վորքրիկ ալն տղան:
— Դե պատմիր, տղաս, պատմիր ինձ անկեղծ,
ի՞նչ ելիր անում դու այս կողմերում.
առ այս խնձորը, ահա նաև դեղձ...
ու կեղծ մի ժպիտ շողաց աչքերում:
Տղան անշարժ եր քարի պես ու լուռ,
— քեզ ուղարկել են, ո՞վ ե ուղարկել,
դե, խոսիր, տղաս, ի՞նչ գործով ե ո՞ւր...
ու չոյեց նա իր բեխերը կեռ — կեռ:
Տղան անսասան ու լուռ եր նորից,
հեղնանք կար նորից աչքերում նրա.

խսկ դբում լուսնի մահիկն եր ձորից,
բարձրանում թիկնած ամպերի վրա:
Նլ չհամբերեց, չուղեց սպան ել,
վոր խաղան իր հետ ու հանկարծ դողաց.
— դե, խոսիր, լակոտ, թե չե կսպանեմ...
և թուրը նրա լույսի դեմ շողաց:
— Դու, պարոն սպա, ծիծաղելի չես, —
քրքջաց տղան խինդով անսպառ:
— Դուրս տարեք իսկույն շան լակոտին ես,
դըն-դա-կա-հա-րել... վորոտաց սպան:
Իջավ խալարը, ծանրացավ կրկին,
սարսուեց, կասես, լուսինը կրկին,
ու ծեծեց մինչ լույս դռները քամին,
քամին մի անտուն, խեղճ թափառական:

III

Ու առավոտյան, յերբ լույսը շողաց,
դնդաղը քերեց կողերը պատի
և ընկավ արևոտ, վորքրիկ ալն տղան
ավազնավրում գորշ անապատի:

I ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եջ

1. Թող կարկաչի	7
2. Հոկտեմբերյան հույզեր	9
3. Ի՞նչ փույթ, քե գայլերն են վռնում	11
4. Բուշեվիկյան մարշով	13
5. Վերհուշ	17
6. Մենք տոն ենք տոնում	19
7. Հորձանքներում	22
8. Յերգ նավթի մասին	25
9. Լալա	28
10. Մանկություն	31
11. Իմ մանկան	34
12. Մայիսն ու ապիս	36
13. Յերբ նորից շողացին գարնան	38
14. Սավեսի գարուն	40
15. Դարձ	45
16. Կոլտոգնիկի յերգը	46
17. Քո տոնն եմ տոնում	48
18. Հորիզոնը կարմրում է	51
19. Իլիչն ու աշխարհը	54
20. Ռ ի մ ա	56
21. Զուրեյիդա	



II ՏՐԻՈՒԵՏՆԵՐ


22. Ղեկավարին	61
23. Յերբ դրսում անձայն լուսինն է շրջում	62
24. Պատուհանիս տակ նռնվում է բարդին	63
25. Կքմկուսին	64
26. Մոքս	65
27. Դու միշտ անմար կմնաս	66
28. Դեռ կշողա արևը վառ	67
29. Մենք անհաղթ շարժերով կելենք	68

III ՓՈՔՐԻԿ ՊՈՅՆՄՆԵՐ

30. Զահիրան	71
31. Լուկ - Բատան (հատված)	79
32. Գարան	84
33. Փոքրիկ հերոսը	89

Նկատված վրիպումներ

Եջ	տող	տպված է	պետք է լինի
17	4 վեր.	հոսում:	հոսում,
19	7 վեր.	պես	դեմ
35	4 վեր.	դասակարգը հին՝	դասակարգը՝
38	15 վոր.	արևելքի	տողը ավելորդ է
52	22 վեր.	արևի, ող,	արևի, ողի,
54	11 վեր.	սիրտս այսպես	սրտիս պես
55	15 վեր.	վճիռավոր	վիրավոր
65	5 վեր.	ափերն անցին	ափերն անցին
73	13 վեր.	կրացվեյի	կրացեյի





ՀՀ Ազգային գրադարան



NL0360360

Գր. 2 ր. 25 Կ.
Կադմ 35 Կ

52694

SAMVEL

LIRIQAQAN HUIZER

AZƏRNƏŞR—1934